




ՍՐԱՊ-ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԿՈՒՏԻՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՁԵՌԱԳԻՐԸ

Դեռևս մեր թվարկությունից 600 տարի առաջ հիշված և Փոյուգիայի քաղաքներից մեկը հանդիսացող Կուտինան իր բազմադարյան գոյատևման ընթացքում ունեցել է անվանակոչման զանազան տարբերակներ՝ Կուտիոն, Kotiaion, Cotyaeum, Cothoeum, դրամների վրա Kottaeon, Kotvaion, որը կարծվում է, որ անվան ամենաճիշտ ձևն է:

Թուրքական ժամանակաշրջանում՝ Քոթայ, Քէօթահիա, Քոթահիա և այլ ձևերով կոչված Կուտինան գտնվում է արևմտյան Փոքր Ասիայում, Անեմ դաղ կոչվող լեռան ճեպել Հուրի բլրան մոտ Փուսաք կամ Թիմբրե կոչվող գետակի ափին¹:

Իրար հաջորդող պատմական վերիվայրումների ընթացքում այն մախ գրավված է եղել Լիդիացիներից, ապա՝ պարսիկներից: Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդների՝ Լիսիմաքոսի և Սելևկյան իշխանության ենթարկվելուց հետո 252 թ. մ. թ. ա. գրավվեց հռոմեական կայսրության կողմից և 189 թվին մաս կազմեց Փոյուգիա կոչվող Հռոմի ասիական մահանգին:

Բյուզանդացիների ժամանակ եղել է կարևոր զինվորական կայան և քաղաքի միջնաբերդը ենթադրվում է, որ կառուցվել է Հուստինիանոս Ա-ի կողմից:

Այս շրջանը, 1156-ից ենթարկվեց սելջուկներին, 1381-ին թուրքերին և վերջնականապես Օսմանյան կայսրության կցվեց Ֆաթիմ սուլթան Մեհմեդ Բ-ի ժամանակ:

Ըստ Էլիյա Բելեբիի, 1672 թվին Կուտինան ունեցել է 50 հազարից ավելի բնակիչ, իսկ 1813—14 թթ. 50—60 հազար բնակիչ, որից 10 հազարը հայ, 5 հազարը հույն:

Հայերը զբաղվել են գերազանցապես արհեստներով և վաճառականությամբ, ունենալով բարեկեցիկ վիճակ, իսկ հույները արհեստավորներ էին: Հետագայում հայերի թիվը նվազում է և 1914 թվին կարծվում է, որ պետք է եղած լինի 450—500 տուն:

Քաղաքում հայ, հույն համայնքները թեև առանձին թաղամասեր ունեին, սակայն բոլորն էլ թրքախոս էին դարձել դեռևս ԺԸ դարից: Հայերը իրենց

¹ Տե՛ս Արշակ Ալպոյանեան, Յուշամատեան Կուտինահայերու, Պեյրուք, 1961, էջ 7:

առօրյա խոսակցության մեջ պահպանել և օգտագործում էին շուրջ 600 հայերեն բառեր²:

Կոտինյան եղել է հախճապակիի արհեստագործության կենտրոն: Այդ արհեստը հայերը իրենց հետ բերել են Արևելյան Հայաստանից³: Ամենավաղ թվակիր հախճապակին, որը կա առ այսօր, դա մի սկիհ է 1510 թվականից, ուր կա ման քաղաքի անունը:

Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 931 մետր բարձրության վրա, ունի առողջարար կլիմա, շրջապատում կան բազմաթիվ աղբյուրներ և ջերմուկներ՝ ըլըճա և այլն⁴:

Հայերը Կոտինայում հաստատվել են վաղուց՝ դեռ բյուզանդական շրջանում: Կա փաստ, որ 1391-ին ունեցել են եկեղեցի, որի անունը անհայտ է, ուրեմն ԺԴ դարում այնտեղ արդեն հայեր կային, իսկ եկեղեցին գուցե ա. Աստվածածինն է, որի վրա կա 1445 թվականը:

1391 թվին կառուցված եկեղեցու նվիրատուներից մեկը կարծվում է, որ որդի Մկոտիչի Անեցի Ռուզպակն է: Այս ենթադրության հիմքը Կոտինայում գտնված «Մեկնութիւն կաթողիկեայց Սարգսի Ընորհալոյ» ձեռագրի հիշատակարանն է⁵: Կա ման կարծիք, որ Կ. Պոլսի առաջին պատրիարք Հովակիմ Եպիսկոպոսը ման եղել է Կոտինայի առաջնորդը:

Սակայն Կոտինայի պատմության անփոխարինելի աղբյուրը դա այն ժամանակագրությունն է. (Քիթիք), որը հիշատակարանների հիման վրա կազմել է տեղի Ստեփանոսի և Հովսիսիմեի որդի՝ Անտոնը: Այն 1445 թվականից մինչև իր օրերը՝ 1716 թվականի դեպքերը պարունակող մի աշխատություն է, որը և հիշատակ է թողել Կոտինայի ա. Աստվածածին եկեղեցուն:

Այս Անտոնը, Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 774, 1651 թվին Կոտինայում ընդօրինակված մի ժողովածուի գրիչ՝ տեղի Աստվածատրի և Սուլթանի որդի Անտոնի թոռն է⁶:

«Քիթիքը» սկզբնագիր չէ, այլ սրբագրված ընդօրինակություն, այն էլ ընդհանուր հիշատակարանների մի մասը, որ հասել է մինչև ԺԸ դարի սկիզբը:

Հիշատակարանի սկզբնավորողը Կոստանդին «Էրեցն» է ՊՂԴ 1444—5 թվին, ուր հիշվում է ա. Աստվածածին եկեղեցու շինությունը «ի հայրապետութեան տեառն Կարապետին և յեպիսկոպոսութեան տեառն Ովակիմայ... և ի թագաւորութեան Տաճկաց Սուլթան Մուրատի...»⁷:

Ժամանակագրությունը արժեքավոր աղբյուր է Կոտինահայ գաղութի վաղ շրջանի պատմության, ինչպես ման ամբողջ Թուրքիայի արտաքին քաղաքական կյանքի՝ պատերազմների, ներքին՝ տնտեսական և սոցիալական հարաբերությունների ուսումնասիրման համար:

² Օգտագործված հայերեն բառերի մասին տես՝ Առնակ «Հայրենիք» 1937 թ. էջ 105. ման Ա. Ալպոյանեան, նշվ. աշխ., էջ 166—177:

³ Թեոդիկ, Ամենուն Տարեցոյց, 1923, էջ 212:

⁴ Այդ մասին մանրամասն տես՝ Հ. Ներսես վրդ. Սարգիսյանի «Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս», բազմավեպ, 1863, էջ 227—230, 261—263:

⁵ Ա. Ալպոյանեան, նշվ. աշխ., էջ 208—209:

⁶ Տես՝ Հ. Ս. Անապյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ 973:

⁷ Կոտինահայ ժամանակագրութիւն, հրատարակեց հ. Պ. Զորթյան (Առնակ), Վիեննա 1960, էջ 14—15. նույնը տես ման՝ Հանդես ամսօրյա, 1952, էջ 98—110, 242—257, 596—601. 1959, էջ 520—532 և 1960, էջ 47—75:

Ձևայած, որ հիշատակարանը սկսվում է 1445 թվի ս. Աստվածածին եկեղեցու շինության փաստարկումից, սակայն պետք է ընդունել, որ մինչ այդ էլ հայերը անկասկած եղել են Կոստինայում դեռևս ԺԴ դարի կեսերից, որի փաստարկումը մեծ դժվարություններ չի հարուցում, սակայն ո՞րտեղից են եկել: Այս հարցին կան մի քանի պատասխաններ:

Ըստ Իգնատիոս վրդ. Աքլանի, Կոստինայի հայերը եկել են Սյունյաց նահանգի Գողթն գավառի Ղղնա ավանից (Նախիջևան) ԺԴ դարի վերջերին կամ ԺԵ դարի սկզբներին:

Կան կարծիքներ, որ հայերը եկել են Պարսկաստանից (իմա՝ Արևելյան Հայաստան), Սսից, կամ Անիից:

Սամսոն Գասպարյանը «Կոմիտաս, համառոտ ակնարկ իր կյանքի և երաժշտական գործունեության վրա» հոդվածում գրում է «Քոթահիայի բնիկ հայ ընտանիքները հայկական Ջոկ ցեղից են, որոնք գաղթել ու բնակություն էին հաստատել այնտեղ ԺԷ դարի վերջերում Գողթն գավառի Ցղնա գյուղից» («Արև», 7 հունիս 1947): Նույնը ասում է նաև Հրանդ Հրահանը («Արև», 30 հոկտ. 1952):

Կոմիտասի նախահայրերի հայրենիքը Ցղնան լինելու մասին փաստարկվում է նաև նրանով, որ դեռ մի քանի տասնամյակ առաջ կանգուն էր Սողոմոնյանների տունը Ցղնայի Տամբրի թաղամասում⁸: Սակայն, եթե Կոմիտասի նախահայրերը և ուրիշներ ԺԷ դարում գաղթել են Ցղնայից, ապա Կոստինահայերի մի զգալի մասը ավելի վաղ շրջանում տարբեր տեղերից են գաղթել: Այդ ապացուցում է «Քիթիքը», ուր վաղ շրջանի հիշված նվիրատուների մեջ գրեթե բացակայում են ցղնացիներ, այլ կան բազմաթիվ այլ վայրերից գաղթածներ, որոնց հայրենիքը կամ ծննդավայրի անունը դարձել է նրանց ազգանունը: «Քիթիք»-ում առաջին ցղնացին հիշվում է ՈԾ 1632 թվին: Դա ցղնացի Խոճա Գրիգորն է, որի հոգվույն համար նվիրվել է ԾԾ ստակ⁹, որից հետո ավելի քան երկու տասնյակ անգամներ հիշվում են ցղնացիներ:

Այսպիսով հիմքից զուրկ չէ Ջորթյանի կարծիքը, որ Կոստինայի հայերը բազմապատկվում են Ցղնայից 300 ընտանիք գաղթականներով, որոնք գալիս-հաստատվում են այս շրջանի նաև այլ թաղաքներում («Հայրենիք» ամսաթերթ, 1937, թիվ 9):

Շրջակա բնակավայրերից պետք է հիշել Թավշանլը կամ Քեշանը, ուր կար, վանքիյան կոչվող ընտանիքի նախնիների կողմից, Ցղնայից բերված ս. Ստեփանոսի մասունքը, համանուն եկեղեցում, իսկ բնակիչները գերազանցապես ԺԷ դարում Ցղնայից գաղթածներ էին: Արծաթապատ մասնատուփի մեջ կային նաև Մինաս վարդապետի (եգիպտացի) և Պանտալեոնի բժշկի մասունքները¹⁰:

Բարգավաճ Կոստինահայ գաղութը հայտնի էր նաև որպես գրչավայր, ուր գրվել են երկու տասնյակից ավելի ձեռագրեր սկսած 1486-ից մինչև 1790-ական թվականները¹¹:

⁸ Տես՝ Ա. Այվազյան, Հայկական նարտարապետական հուշարձաններ, Ագուլիս, Երեվան 1984, էջ 54—55:

⁹ Տես՝ Կոստինահայ ժամանակագրություն... էջ 105:

¹⁰ Այս սուրբը Նիկոմիդիայից էր, ապրել է Մաքսիմիանոսի (285—310 թթ.) ժամանակ: Մարտիրոսացավ 305 թվին: Ինչպես վկայվում է ճշտագույն անունը եղել է Պանտելեյմոն: Ամենաողորմ, որը և ձևափոխվել է ստանալով նաև նոր՝ ամենաոյուն իմաստը:

¹¹ Այդ մասին մանրամասն տես՝ Ա. Ալպոյանեան, Աշվ. աշխ., էջ 197—213:

Հայկական բնօրրանից կտրված և արևմտյան Փոքր Ասիայի մի հողակտորում բնավորված այս գաղութը ևս դարձավ թուրքական ցեղասպանության զոհը: Առաջին համաշխարհային պատերազմին մինչև 1923 թիվը կուտինահայությունը տեղահանվեց, կոտորվեց ու սփռվեց ամբողջ աշխարհով մեկ, որով ընդհատվեց և աստիճանաբար վերանում է կուտինահայ հասկացությունը, որով այլևս ակնկալիքները չքացել են կուտինահայերից և Ալպոյանյանի նշած 23 Ձեռագրերին այլևս նորը ավելանալ անհնար է:

Սակայն հաճելի անակնկալ էր, երբ բնիկ կուտինացի, 1940-ին մեռած, Փերուզ Գելեջյանի հետնորդների մոտ հայտնաբերվեց մի ձեռագիր, որի մասին ցանկանում ենք հայկական ձեռագրագիտական շրջանակներին տեղյակ պահել, տալով ձեռագրի նկարագրությունը:

Թերթերը՝ 181=362 էջ: Մեծություն 25,5×18,5 սմ.—գրություն՝ միասյուն, 22—24 տող: Գիր՝ շեղագիր: —Նյութը՝ թուղթ հասարակ և հաստ: Զարդագրություն՝ չունի: Գծումները՝ մատիտով տողերը գծված, էջակալված հայկական այբուբենի թվական արտահայտությամբ: Վիճակը՝ մաքուր, միայն թղթերը դեղնած, առաջին երկու և վերջին էջերը պակաս: Կազմը՝ սովորաթուղթ մուգ սրճագույն կաշեպատ: Կազմի վրա, ներսի կողմից փակցված են թղթեր, որոնցից հատկապես վերջինը անկասկած ձեռագրից է պոկված, որովհետև ներսի կողմից երևում են տառեր հար և նման բուն ձեռագրի: Գրիչ՝ Մալեզ Ստեփան օղու յովհաննէս: Տեղ՝ Կուտինա (Քոթահիա): Թվական ժԹ դար— 1864—1885 թթ.:

Հիշատակարաններ.— 1. էջ ԾԻԴ լուսանցքի և դատարկ տողատակին մանուշակագույն թանաքով, հետագայում գրված երկու հիշատակարաններ: Տողատակինը հետևյալն է՝

1. Պու էլ եազըսը քիթապը եազան Քէօթահեա սբ Թէոթորոս լուսաւորչական եկեղեցի քահանասը օլան տէր Պողոս քահանայ տըր. 43 սէնէ քաւանայ փազիֆեսիսի հիչ գուսուրսուզ էտէրէք վիֆաթ էթմիշտիր. հէր քիմ օգուր իսէ պու քիթապը տէր Պողոս քահանայա լուսահոգի տէյերէք հաթըրէյլէ

Ա. Երեմեան

Նույն էջի լուսանցքում եղած հիշատակարանը.

2. պու քիթապ հէր քիմի էլինտէ պուլունուր իսէ կիզէլ մուհաֆազա էթմէսինէ րիճա էտէրիմ. չիւնքի տէր պօղօս քահանանըն էլ եազըսը օլուպ անթիքա տըր. ալլահ ատէմի պիր քահանայ իտի:

Ա. Երեմեան

1-ի թարգմանությունը.— Այս ձեռագիր գիրքը գրողը Քյոթահիայի սուրբ Թէոթորոս լուսավորչական եկեղեցու քահանա եղած տէր Պողոս քահանան է. 43 տարի քահանայի պաշտոնը առանց թերության կատարելով մահացել է. ով որ կարդա այս գիրքը տէր Պողոս քահանային լուսահոգի ասելով հիշի:

2-րդի թարգմանությունը.— Այս գիրքը ում ձեռքին էլ գտնվի լավ պահպանելու համար եմ խնդրում, որովհետև տէր Պողոս քահանայի ձեռագիրը լինելով թանկագին (հնություն) է [նա] Աստուծո այր մի քահանա էր:

Անատարկելի ոճով գրված այս հիշատակարանները կարծես մեզ հիմք են տալիս անվերապահորեն ընդունելու տէր Պողոսի գրիչ լինելը, քանի

որ այդպիսի քահանա իսկապես գոյություն է ունեցել¹², իսկ ձեռագրում նմանօրինակ առանձնացված հիշատակարաններ գոյություն չունեն:

Սակայն, ձեռագրի մանրակրկիտ հետազոտությունը այլ եզրակացության հանգեցնում: ՄԿԶ, ՄԶ, ՄԶԵ և ՅԼԱ էջերի տեքստերի անմիջական շարունակություններում կան հետևյալ հիշատակարանները, որոնք հարցականի տակ են դնում Պողոս քահանայի ձեռագրի գրիչ լինելը:

1. Էջ ՄԿԶ — Վէ պու քիթապը եազան մալեզ Ստեփան օղլու յովհաննէս եազտըմ պու քիթապը քի կիւնահլը ճանըմա պիր ողորմիս չըքարալար վէ պէն պու քիթապը եազմակա լայրք տեյիլիմ լաքին պեօյլէ քըսմէթ էթտի սահապըմըզ...:

Թարգ.— Եվ այս գիրքը գրողը մալեզ ստեփանի որդի յովհաննէս գրեցի այս գիրքը, մեղավոր հոգուս մի ողորմիս հանեն. և ես այս գիրքը գրելու արժանի չեմ, բայց Տերը այսպիսի բախտի արժանացրեց...:

2. Էջ ՄԶ.— Վէ պու քիթապը եազան մալեզ ստեփանըն օղլու յովհաննէս եազտըմ պու քիթապը քի կիւնահլը ճանըմա պիր ողորմիս չըքարալար տեյի. վէ պու քիթապը եազան հաքիր նէլայրք կիւնահքեարա օքուեան վէ տիւնլէյէնլէր պիր հայր մեր տեյիպ պիր ած ողորմի չըքարըրսա ետի սինսիլէմէ պիրտէն տիլէրիմ ճենապը քիպրիա հազրէթլէրիստէն քի օտա իքի ճեհանտէ օնա ողորմել օլսուն վէ իշինի կիւնհինի պիր քէտէր սաքլաւըն. վէ էսլա եօքսուլլուք կեօրմէյեսիհիզ. վէ տիլէրիմ ամենա սք երրորդութիւնտան քի ճիւմլմէնին իքի ճեհանտէ կեօյնիւնին միւրատընը վերիպ վէ սօն կիւրլիւկի քերէմ էյլէսին. վէ տիլէրիմ մայր ածածիստէն քի իքի ճեհանտէ պօշ պըրաքմասըն վէ դատաստան կիւնիստէ թիճա էյլէսին էպէտիլ էպէտ ամեն:

Թարգմ.— Եվ այս գիրքը գրողը մալեզ ստեփանի որդի յովհաննէս, գրեցի այս գիրքը, որ մեղավոր հոգուս մի ողորմիս հանեն. եվ այս գիրքը գրողը ձեր նվաստ ծառային և մեղավորին, որ կարդացողները և լսողները մի «Հայր մեր» ասելով մի աստված ողորմի եթե հանեն յոթը պորտով կիւնդրեմ բարձրյալ մեծն Աստծուց, որ նա երկու աշխարհում նրան ողորմի և նրա գործունեությունը փորձանքից պահի. և բոլորովին չքավորություն չտեսնեք: Եվ կիւնդրեմ ամենասուրբ երրորդությունից, որ բոլորին երկու աշխարհներում սրտի ցանկությունը տալով վերջին հաջողության արժանի դարձնի և խնդրում եմ մայր աստվածներից, որ երկու աշխարհներում պարտատեր չթողնի և դատաստանի օրը շնորհի արժանացնի հավիտյանս հավիտենից ամեն:

3. Էջ ՄԶԵ.— Վէ իլլաքի պու քիթապը եազան մալեզ ստեփանըն օղլու յովհաննէս եազտըմ պու քիթապը քի օքունտուկու զաման պիրէր ողորմիս չըքարալար...:

Թարգմ.— Եվ հատկապես այս գիրքը գրող մալեզ ստեփանի որդի յովհաննէս գրեցի այս գիրքը, որ [այն] կարդալու ժամանակ մեկ-մեկ ողորմի հանեն...:

4. Էջ ՅԼԱ.— վէ պու քիթապը եազան մալեզ ստեփանն օղլու յովհաննէս եազտըմ պու քիթապը քի կիւնահլը ճանըմա պիր ողորմիս չըքարալար տեյի...:

Թարգմ.— Եվ այս գիրքը գրողը մալեզ ստեփանի որդին յովհաննէս

¹² Տես՝ Ա. Ալպոյանեան, նշվ. աշխատությունը, էջ 108—109:

գրեցի այս գիրքը, որ մեղավոր հոգուս մի ողորմիս հանեն...¹³: «Քիթիք»-ում հիշատակարան կա, ուր ասվում է «Աստուած ողորմի մալեզ օղլու յոհաննէս ծ փարա»¹⁴: Այս Յոհաննէսը անկասկած մեր գրչի գերդաստանի նախահայրերից մեկն է:

Քանի որ ձեռագիրը հայատառ թուրքերեն¹⁵, ապա սույն ձեռագրի բովանդակությամբ հետաքրքրվողների աշխատանքը դյուրացնելու համար հարմարագույնը գտանք տալ յուրաքանչյուր հատվածի (որոնք իրարից անկախ ստեղծագործություններ են) վերնագիրը, նրա թարգմանությունը և բովանդակության համառոտ շարադրանքը, շխախտելով նրանց հերթականությունը:

1. Ինչպես ասվեց, ձեռագիրը պակասավոր է և սկսվում է Գ էջից: Չկան նաև Ե, գ, է, ը էջերը: Միավմամբ բաց են թողնված ՄԻԸ, ՅԺԲ, ՅԼԸ էջերը, որի համար գրիչը հիշեցնում է էջի վերևի մասում գրելով՝ «պուրաքամ եանլը2 օլմուզ տուր շիքէ էթմեն» այսինքն՝ այս թվանշանը սխալմամբ է եղել մի կասկածեք:

Գ էջի առաջին տողերն են՝ «...լէրէ, թողութի ումարըզ էֆենտիմիզ քստան...» (Մեր տեր Քրիստոսից թողություն ենք սպասում): Այս հատվածի բովանդակությունը վերահասու լինելուց պարզվում է, որ այն կրոնաբարոյախոսական-խրատական մի աշխատություն է, ուր դիմելով ընթերցողներին, որոնց հաճախ եղբայրներ է անվանում, բացատրում է Պատարագի և հաղորդության խորհուրդը, ուր անբաժանելի է համարում սկիհում գտնվող հացն ու գինին: Խորհուրդ է տալիս կեղծավորությունից հեռու մնալ, սիրել հայր ու մայր, հեռավոր և մերձավոր բարեկամներին՝ սեփական մարմնի նման: Հեռու մնալ մեղքերից, որովհետև դատաստանի օրը ամեն ինչ ի հայտ գալով ամաչելու ենք: Կոչ է անում ապաշխարության: Այն ԺԳ էջում վերջանում է տերունական աղոթքով, որը նույնպես թուրքերեն է:

2. Պատարաքըն թիրքճէսի օլտուք քստար

(Պատարագին թուրքերենը եղածին չափ)

Ձեռագրի ԺԴ էջից սկսվում է Պատարագը մեղեդիի և թափորի վերջանալուց հետո:

Սրկ. Միսպարեքլէ եա սահապ—օրհնեա տէր:

Քա. փէտէրին վէ էվլատըն վէ ուղիդ... Օրհնեալ թագաւորութիւնն հօր և ...: (Ժամամուտը չի ասված):

Սրկ. տահա գիյատէ... եւ ևս խաղաղու...: Օրհնեա տէր:

Չկա գիրք, Աւետարանը և հաւատամքը, այլ ուղղակի ասվում է «Գիրք վէ աւետարան վէ հաւատամք տէնէճեք» (Գիրք և ավետարան և հավատամք է ասվելու):

Էջ ԺԵ սրկ. պիզիմ հայրապետիմիզ մկրտիչ սրփազան կաթօղիկօսուն էօմբիս իչուն վէ օնուն բուհունուն բուրդուլուշու իչին սահապ.— այն է՝ վասն

¹³ Հիշատակարաններում կան բարեմաղթությունների շարան, որոնք կրճատել ենք: Միայն էջ ՄԶ-ում եղածը, որպես նմուշ, լրիվ ենք տվել:

¹⁴ Տես՝ Լ. Պ. Զորթյան, նշվ. աշխ., էջ 121:

¹⁵ Այն «փայլում» է օտար՝ արաբերեն և պարսկերեն բառերի առատությամբ: Նրան գուարած գրչի կողմից օգտագործված հարչուրավոր հայերեն բառեր: Տառադարձությունը Արևմտահայերեն է, կան բազմաթիվ տառախալներ, որոնք գալիս են գրչի թրքախոս լինելուց: Մեծատառ բոլորովին չի օգտագործվում: Այդ բոլորը չենք ուղղել, այլ թողել ենք այնպես, ինչպես որ կա ձեռագրում:

հայրապետին մերոյ տեսոն Մկրտիչի կենաց, և փրկութեան հոգւոյ նորին գտէր աղաչեացոյ:

Էջ Ի. մեղեդի «հրեշտակային կարգաւորութեամբ», թուրքերեն: Կանան բոլորովին չթարգմանված հատված էջ ԻԴ-ում այն է՝ եւ գքոյս՝ ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ ամի և յաղագս ամենեցուն:

Էջ ԻԸ—ԻԹ Երգ-քարոզ «Գոհութիւն»-ում հետևյալ կերպ է հիշում հայրապետին և պատրիարքներին. վէ էումումի էրմէնիլէրին եպիսկոպոսապետ վէ իզէլտի հայրապետի Գէորգ սրբազան կաթողիկոս. վէ ազիզ էրուսաղէմին պատրիարք Էսայի սրբազան արք եպիսկոպոս. վէ ըստամպօլուն փաթրիքի օլան մկրտիչ սրբազան արք եպիսկոպոս...» այն է՝ եպիսկոպոսապետին մերո և պատուական հայրապետին ամենայն հայոց տեսոն Գէորգայ սրբազան կաթողիկոսին և սրբոյ Երուսաղիմայ պատրիարք Էսայի սրբազան արքեպիսկոպոսի. և Կ. Պոլստ պատրիարք Մկրտիչ սրբազան արքեպիսկոպոսի...:

Պատարագը վերջանում է էջ ԼԶ քհ. տօլտուր պիզիտէ սէնին ուղիղ բուհունուն իլէ.— «լից և զմեզ հոգւովդ քո սրբոյ» աղոթքով:

Պորաճըքտա պատարագըն թիրքճէսի թէքմիլ.

(Այստեղ պատարագի թուրքերենը վերջ):

Այժմ, պատարագում հիշված քահանայապետների գահակալության տարեթվերի հիման վրա փորձենք գտնել ձեռագրի գրվելու հավանական տարիները:

1. Տ. Գէորգ Դ. Կ. Պոլսեցի, կաթողիկոս Էջմիածնի՝ 1866—1882 թթ.

2. Տ. Եսայի Թալասցի, պատրիարք Երուսաղէմի՝ 1864—1885 թթ.

3. Տ. Մկրտիչ Խրիմյան վանեցի, պատրիարք Կ. Պոլսի՝ 1869—1873 թթ.

Հիշված տարեթվերից ամենավաղը 1864 թվականն է, իսկ ամենաուշը՝ 1885-ը: Ուստի կարող ենք ասել, որ ձեռագիրը գրվել է վերոհիշյալ 21 տարիների միջև ընկած ժամանակահատվածում:

Անբացատրելի է մնում «Գոհութիւն»-ի նախորդող այն հատվածը, որտեղ կաթողիկոս է հիշվում Մկրտիչ Խրիմյանը, որի կաթողիկոսության տարիները (1892—1907 թթ.) սկսվում են հիշյալ ժամանակահատվածից 7 տարի հետ, իսկ նրա պատրիարքության և կաթողիկոս օծվելու միջև ընկած ժամանակը գրեթե մի քսանամյակ է: Ուրեմն այդ փաստը քիչ հավանական է և գուցե վրիպակ:

Մի ենթադրություն. դա գրչի կողմից, Խրիմյան հայրիկին արժանի, հետագայում իրականացած, բարի ցանկությունը կարող է համարվել:

3. քսուն խաչա չըքմասընըն նաքլի օլունուր. եանի աւագ ուրբաթ քարօզու. (Քրիստոսի խաչելությունն է պատմվում, այսինքն ավագ ուրբաթի քարոզը):

Պատմվում է Քրիստոսի խաչելությունը, Հուդայի կողմից Հիսուսին երեսուն դրուշի ծախվելը, վերնատան վերջին ընթրիքը, առաքյալների ոտքերի լվանալը: Հիսուսի խոսքը, թե ձեզանից մեկը ինձ մատնելու է, Հուդայի հարցը, որից հետո մեջ է բերվում Ներսէս Շնորհալու ասածը՝ «ակն արկաներ առ յովհաննէս թէ ով իցէ դավաճանող վարդապետին»: Հիսուս կատարում է հացի և գինու օրհնությունը: Հուդան հացն ու գինին վերցնելով գնում է քահանայապետների մոտ ասելով թե, մարդ կարո՞ղ է սրանից մեծ հանցանք գործել, երբ գինին անվանում է իր արյունը, իսկ հացը մարմինը: Պետրոսի ելույթը և հավի երեք անգամ խոսելը: Հիսուսի վերջին աղոթքը «Հայր անցօ յինէն ըզփաժակս»: Հուդայի համբուրելով մատնելը: Կայեա-

փայլի մոտ Հիսուսի տարվելը, Հուդայի գղջալը և կախվելը, Պիղատոսի ձեռքերը լվանալը:

Էջ ԿԵ—ԿԶ կա մի չափածո գրվածք, որը գրիչը անվանում է քանց (գանձ) կամ ողփ (ողբ), ուր Մարիամ Աստվածածինը խաչված որդու առաջ ասում է՝ րապալիմ յս սէն էվլատըմ. պունուն իշին տօղուրտմ... (տե՛ր Հիսուս որդիս սրա համար քեզ ծննդաբերեցի):

Այն վերջանում է հետևյալ հայերեն բառերով.

որ ընկալար ձայն ողջուն իմ

ի բերանոյ Գաբրիելի:

Էջ ԿԸ—ԿԹ-ում մի այլ չափածո դարձյալ Մարիամի կողմից, ուղղված իր որդուն, որը նույնպես կոչում է քանց (գանձ) կամ ողբ.

սկիզբ—հանը պէնիմ միյածինիմ... ուր է իմ միածինը)

վերջ—գիյատէ տէրտլերիմ եաման: (վայ իմ բազում մեղքերին):

Էջ ՀԴ—ՀԵ ողբ կոչվող մի այլ չափածո մոր կողմից Հիսուսին ուղղված.

սկիզբ—միյածինիմ խաչտան պաքար (միածինս նայում է խաչից)

վերջ—Սէվկիլիւմ էօլտի պէն եաստա (սիրելիս մեռավ ես սգավոր)

Երբ Հիսուսը խաչից իջեցնում են, բարեպաշտ Հովսեփի միջնորդությամբ և Պիղատոսի թույլտվությամբ մարմինը տանում են թաղելու, իսկ Աստվածածինը որդու դիակը գրկած հետևյալ գանձն է ասում.

Էջ ՀԶ—ՀԷ. սկիզբ—Էօլիլերի ճան վերիր քէն (մեռածներին հոգի տալով). վերջ—հէր քիմ աղլար անըր սանա (ով որ լացում, քեզ խղճում է) սէն արքայութիւնն վէր օնա (դու արքայություն տուր նրան): Այնուհետև հայերեն՝ մեզ փարեխօս աստվածածին.

իմ յույս ընդ օր հավոր մեի:

Վերոհիշյալ չափածոները ուշադրության արժանի են այն իմաստով, որ սրանք գուցե նորություն բերեն հայատառ թուրքերենով գրված ստեղծագործությունների մեջ:

Այս մասը վերջանում է Հիսուսի հարության նկարագրությամբ, որից հետո էջ ԶԳ կա հայերեն հետևյալ արձակ հատվածը.

որ եւ փարերարըն ած հաւորս շնորհիւ և միջնորդութք սրբոյ խաչին և բարեխօսութք սրբոհօ ածածնին տացէ տր ած աշխարհիս խաղաղութ թագաւորաց յաշտութի..., որից հետո թուրքերեն աղոթք, որը և վերջանում է հետևյալով.

որ եւ շընօրհք տն մերոյ յսի քսի եղիցի ընդ ցեզ ամենեսեանսըդ ամէ-ն: 4 Էջ ԶԵ ալեքսիանոսի ճգնաւորին

Սա Ալեքսիանոս կամավոր աղքատի, կոչված նաև Այր Աստուծոյ, վարքն է, որը մի սիրուն վեպ է քրիստոնեական ոգով տոգորված:

Այն շատ է տարածված եղել հայերի և հույների մոտ հատկապես Փոքր Ասիայում, որի հանգավորված ձևը երգվել է վերոհիշյալ ժողովուրդների մոտ:

Հայրը Եփրեմիանոս, մայրը Աննա, կինը Մարգարիտ:

5. Էջ ԾԺԵ. Բարսեհին պատմութիւնու նաքը օլունուր (Բարսեղին պատմությունն է պատմվում)

Հուլիանոս ուրացող թագավորի և Բարսեղ Կեսարացու հանդիպման վերաբերյալ նկարագրական պատմություն է:

6. Էջ ԾԺԸ. սաթայէլէ թէմեսիկ վերէնին նաքը (Սադայելին պայման դնողին պատմությունը)

Բարսեղ Կեսարացու հրաշագործ հսկման և աղոթքների շնորհիվ, երիտասարդ ծառան փրկվում է սադայելին տված պայմանների կատարելու պարտավորություններից, դառնում քրիստոնյա և հասնում իր նպատակին:

7. Էջ ԾԻԵ. աբրահամըն պատմությունու (Աբրահամին պատմությունը)

Ուրֆա քաղաքում գտնվող Աբրահամ անունով արդարը, մեծ մարդու որդի էր: Հայրը Աբրահամին ամուսնացնել էր ուզում, սակայն նա ցանկանում էր մենակյաց դառնալ: Աբրահամը հակառակ հոր ցանկության, երկու միլ հեռավորության վրա գտնվող մի լեռան գագաթի քարայրում առանձնացավ, ուր ճգնեց 10 տարի: Ծնողների մահվանից հետո, նրանց ունեցվածքը աղքատներին է բաժանում, իսկ մի եպիսկոպոս նրան քահանա է ձեռնադրում մոտակա գյուղի համար, ուր քրիստոնյաներ չկային:

Աղոթքով ու հրաշքներով գյուղացիներին քրիստոնյա է դարձնում և նորից է գնում քարայրի ճգնարանը: Այնտեղ հանդիպում է սատանային, որին հաղթում է աղոթքի ուժով:

Պոռնկությամբ զբաղվող Մարիամին դարձի է բերում, սրբացնում, որը ճգնարանում բուժում է դիվահարներին ու հիվանդներին, որից հետո մահանում: Մեռնում է նաև Աբրահամը, իսկ մի եպիսկոպոս հողին է հանձնում երկու սրբերի մարմինները:

8. Էջ ԾԼԲ. քրք չօճուքլարըն նաքլիյեթի

(քառասուն մանկանց ավանդապատումը)

Լուկիանոս կայսեր հրամանով քառասուն մանուկներին անասանելի չարչարանքների են ենթարկում Սեբաստիայում, մարմինները այրում և գրցում են ջուրը, սակայն հավատացյալները սրբերի մնացորդները ջրից հանում, թաղում, որոնց վրա եկեղեցի են կառուցում:

9. Էջ ԾԼԹ. Քասպար սբուն պատմությունու

(սուրբ Քասպարի պատմությունը)

Քասպարը կուսպաշտ էր, իսկ իր հավատարիմ Մարքաս անունով ընկերը քրիստոնյա: Նրանք վաճառականությամբ էին զբաղվում ապրելով Մաքսիմիանոս կայսեր ժամանակ:

Մաքրասը, իր մահվան ժամանակ ընկերոջն է տալիս իր ունեցվածքը պատվիրելով այն երեքի բաժանել. մեկ մասը աղքատներին տալ, երկրորդը ինքը վերցնել և երրորդը Քրիստոսին տալ, որին կարելի է գտնել Երուսաղեմում: Մահվանից հետո, Քասպարը երեքի է բաժանում ունեցվածքը (ամեն մի բաժինը 40 պատման ոսկի) և ճանապարհ է ընկնում:

Անտիոք քաղաքում հանդիպում է Պողոս անունով հոգևոր առաջնորդին, որը եկեղեցում խորհուրդ է տալիս, ոսկին հանձնել այնտեղ գտնվող Քրիստոսին, ուր և գիշերում է: Մի գիշերվա ընթացքում դարձի է գալիս, ընդունում քրիստոնեությունը և ապրում 5 տարի:

10. Էջ ԾԾԲ. Մելքիսեթ քահանանըն պատմությունու

(Մելքիսեթ քահանայի պատմությունը)

Նախքան Քրիստոսը Մելքի անունով մի թագավոր կար, իսկ սուլթանի անունը Սադիմ էր և ուներ երկու որդի՝ Մելքի և Մելքիսեթ:

Մելքի թագավորը 12 կուռք ուներ, որոնցից յուրաքանչյուրը տարվա որոշված օրերին պաշտվում էին:

Մելքի թագավորը, Մելքիսեթ որդուն հրամայում է տոնակատարության առթիվ, իր հոտից 7 ոչխար և 7 հորթ բերել::

Մելքիսեթը ճանապարհին հրաշքի է հանդիպում և հրաժարվում կուսպաշտությունից, ինչպես նաև անասուններ մորթելուց:

Մորը միջնորդությամբ, հորը բարկությունից ազատվում և Աբրահամի հետ հանդիպումից հետո դառնում քահանաների առաջին քահանայապետը:

11. Էջ ԾԾԹ. Բարսեղին պատմություն (Բարսեղին պատմությունը)

Բարսեղ Կեսարացու ջանքերով մի հրեա ընտանիքի քրիստոնյա դառնալու նկարագրությունը:

12. Էջ ԾԿԱ. անտոն ճրքնաւորուն նաքի

(Անտոն ճգնավորի պատմությունը)

Որք Անտոնը լսելով Ավետարանի այն հատվածը, որտեղ ասվում է ձեր ունեցվածքը վաճառեցեք և եկեք ինձ մոտ, իր ինչքը վաճառեց, բաժանեց աղքատներին և սկսեց հետևել աղոթքի՝ եկեղեցում և գերեզմանում: Աղոթքի ժամանակ երկինքը ճեղքվեց և Անտոնը տեսավ լուսեղեն հայր Աստծուն: Այնուհետև սատանան ոսկու և արծաթի միջոցով փորձությունների ենթարկեց Անտոնին: Սակայն նա հրաժարվելով այդ բոլորից, մտնելով մի քարանձավ դարձավ ճգնավոր:

Այնուհետև գնաց Կոապաշտ թագավորի կողմից բանտարկված քրիստոնյաների մոտ, որի համար և վտարվում քաղաքից: Գնում է Տաճկաստանի սարերում ճգնելու և քրիստոնեություն տարածելու: Սադայելին հանդիպելուց հետո ցանկացավ գնալ իր հայրենիքը՝ Աղեքսանդրի քաղաքը: Այնտեղ մարդկանց հավատքի բերեց, որից հետո Կոստանդինոս թագավորից հրավիրվեց հոգևոր առաջնորդ դառնալու համար, սակայն չգնաց: Այնուհետև իր աշակերտների մոտ քարոզելով մահկանացուն կնքեց ԾԵ (105) տարեկան հասակում:

13. Էջ ԾՀԱ. սբ դավիթին նաքը օլունոր

(սուրբ Դավթի պատմությունն է լինում)

Դավիթ Խորխասան քաղաքից և քզլպաշ կոչվող ցեղից էր. լինելով այլազգի կոչվում էր Ապոլլահ: Սա հավանելով քրիստոնյաների ծեսերը մտածեց դավանել Քրիստոսին և իր մտադրությունը հայտնեց Գրիգոր կոչվող իշխանին, որը նրան տանելով Էջմիածին հանձնեց Անաստաս կաթողիկոսին: Վերջինս նրան հավատքի բերելուց ութը օր հետո, Գրիգոր իշխանի կնքահայրությամբ մկրտեց և Դավիթ անվանակոչեց:

Էջմիածնի շրջանի մահանգապետը, որը Կոապաշտ էր, իմանալով այդ մասին, իր մոտ կանչեց կաթողիկոսին և բացատրություն ստանալով, իր մոտ բերել տվեց տղային, որը անկախ խոստովանեց իր պաշտամունքը:

Թագավորը նրան բանտարկեց չարչարեց, սակայն նա անխախտ պանդեց իր հավատքը ու մահատակվեց հրապարակում, իսկ քրիստոնյաները մարմինը ամփոփեցին գերեզմանում և մի խաչ տնկեցին վրան, որը բժշկություն էր պարգևում հավատացյալներին, որովհետև գերեզմանի վրա լույս չլույս և մնաց ողիղ ութը օր:

14. Էջ ԾՀԷ. յակոբ քահանանըն նաքը օլունոր

(Հակոբ քահանայի պատմությունն է լինում)

Այս Կոապաշտ Հակոբը Քրիստոսին հավատալով քահանա դարձավ և մի սարկավագ ուներ Եղա անունով:

Սակայն Խորխասան քաղաքում մի անհավատ դատավոր կար, որը սրանց իր մոտ կանչելով նախ համոզում է հրաժարվել իրենց հավատքից, որի իզուր անցնելը տեսնելով երկուսին էլ բանտարկեց և ապա գլխատեց: Երբ դահիճը արյունոտ սուրը լնի մեջ լվաց, լիճը նախ ամբողջ արյուն դարձավ, իսկ ապա լրիվ չորացավ:

15. Էջ ԾՀԹ. ափա մարկոսուն վէ սրապիյօնուն նաքը օլունոր

(Աբա Մարկոսի և Սրապիոնի պատմությունն է լինում)

Սրապիոնը Եգիպտոսից էր: Կասկածիյա կոչվող քաղաքում Հովհաննես անունով մի ծեր մարդ կար, որը հեռու ճանապարհից եկած հոգևած Սրապիոնին իր մոտ ընդունեց:

Սրապիոնը, այնտեղից հեռանալով, ըստ իր տեսած երազին գնաց Թարմակիյա կոչված սարը, անցնելով Խորհասան քաղաքից: Բազմաթիվ օրեր ոտքով գնալուց հետո հասնում և բարձրանում կատարին, ուր գտնում է աբա Մարկոսին, որը 97 տարի ճգնում էր ու ինք արդեն 135 տարեկան էր: Մարկոսը ծնողի մահից հետո իր ունեցվածքը բաժանել էր աղքատներին և մի տախտակի վրա նստած ծովով հասել էր այնտեղ:

Սրապիոնը աբա Մարկոսից ընդունելով վերջին օրհնությունը, նրա մահվանից հետո ըստ հանգուցյալի վերջին ցանկության դիակը թաղում է նրա ճգնած քարայրի մեջ և անցքն էլ քարերով փակելուց հետո, հրեշտակների ուղեկցությամբ, կարճ ժամանակում հասնում Կասկածիյա քաղաքը, ուր ընդունվեց նույն Հովհաննեսի կողմից: Նրան պատմում է այն ամենը ինչ տեսել էր իր ճանապարհորդության ընթացքում:

16. Էջ ԾՂԶ. սբ մարկոսուն նաքլը օլունուր

(սուրբ Մարկոսի պատմությունն է լինում)

Հոովմի նահանգում, Ասորեստան կոչվող երկրում երեք ճգնավորներ էին ապրում: Հրեշտակի խորհրդով, նրանք գնում են սուրբ Մարկոս ճգնավորին հանդիպելու, որին հանդիպում են մի քարայրում և երկու առյուծների հետ: Ըստ սուրբ Մարկոսի պատմածի, նա Հոովմ քաղաքից էր և երբ հայրը նրան 12 տարեկան հասակում ամուսնացնում է, նա փախչում է հարսի մոտից և տարբեր կենդանակերպ առաջնորդների միջոցով հասնում այդ քարայրը և հանդիպում առյուծներին:

Այնուհետև երբ սուրբ Մարկոսը մեռնում է, երեք ճգնավորները նրան թաղում են քարայրում և առյուծների առաջնորդությամբ հասնում իրենց հայրենիքը և ինչպես որ տեսել էին սուրբ Մարկոսին այնպես էլ պատմում, որը և գրի է առնվում:

17. Էջ ՄԺԱ. սբ մինասըն նաքլը օլունուր

(սուրբ Մինասին պատմությունն է լինում)

Այս սուրբ Մինասը Եգիպտոսից էր և եկավ Քոթահիա քաղաքը, ուր կռապաշտները շատ էին, և Մինասը Քրիստոս Աստծուն էր դավանում: Այդ մասին հայտնեցին տեղի դատավորին, որը հավատաքննեց և ապա նրան բանտարկեց: Բանտից փախչում է, սակայն մարտիրոսանալու միտումով նորից է վերադառնում և բանտարկվում, ուր դատավորի կարգադրությամբ սկսում են չարչարել՝ վառելով մարմինը: Դահիճը նրան տանում է հրապարակ գլխատելու համար, ուր ս. Մինասը վերջին աղոթքը անելուց հետո գլխատվում է: Կատարվում է հրաշք, և Մինասը իր գլուխը թևին տակ դնելով վազում և մտնում բացված ժայռի մեջ: Դատավորի կարգադրությամբ մարմինը հանում են այնտեղից և վառում: Սակայն քաղաքում գտնվող քրիստոնյաները մնացած ոսկորները հավաքում և թաղում են Քոթահիայում, իսկ մոխիրը տանում Ստամպոլ ուր մոխիրը հրաշագործություններ է կատարում:

18. Էջ ՄԺԶ. իքի աեաքտաշըն նաքլը օլունուր

(Երկու ճանապարհի ընկերների պատմությունն է լինում)

Ժամանակին մի նահանգում երկու քրիստոնյա ընկերներ որոշում են գնալ պանդխտության: Տասը տարի հետո վերադառնում են: Հասնելով

իրենց քաղաքի մոտ ուշ լինելու պատճառով այդ գիշեր չեն մտնում քաղաք, այլ մնում են գերեզմանատանը: Գիշերը այնտեղ հրաշքներ են տեղի ունենում: Մեռելները նրանց տանում են ճաշի, իսկ մի ընկերոջ ասում են թե դու երեք օրվա կյանք ունես: Երեք օր աղոթելուց հետո, երրորդ օրը եկեղեցիից վերադարձին սպանվում է և թաղվում գերեզմանատանը աչքին երևացած երեսունինը մեռելների կողքին, դառնալով քառասուներորդը:

19. Էջ ՄԻԴ. վասիլոս եպիսկոպոսուն ճաքը

(Վասիլիոս եպիսկոպոսին պատմությունը)

Կոապաշտ թագավոր Թիկոդիեռեանոսի ժամանակ ապրող սուրբ Վասիլիոսը ողարկվեց մի կոապաշտ ժողովրդի մոտ քրիստոնեություն քարոզելու:

Այդ օրերին մի կոապաշտ մեծահարուստի միակ որդին էր մահացել, որի համար ծնողները ողբում էին:

Մահացած երեխայի խոսքերին անսալով ծնողները գալով Վասիլիոսի մոտ քրիստոնեություն ընդունեցին, որից հետո վերջինս հրաշք գործելով երեխային գերեզմանից ողջ հանեց, որը տեսնելով շատեր քրիստոնյա դարձան:

Այդ լսելով թագավորը շատ քրիստոնյաների սպանեց, իսկ Վասիլիոսին չարչարելով գլխատեց: Քրիստոնյաները սրբի մարմինը թաղեցին գերեզմանում, որի վրա շատ հավատացյալներ բժշկվեցին:

20. Էջ ՄԻԹ. անդամալուծուն ճաքի օլուր շինտի սեօյլեր:

(անդամալուծի պատմությունն է հիմա ասվում)

Մեր տեր Հիսուս Քրիստոսը աշխարհ եկավ, խաչվեց, թաղվեց, հարություն առավ և համբարձում առնելուց հետո մի շարք խորհուրդներ տվեց աշակերտներին, որպես մարդասեր հաճախ այցելելով իր սիրեցյալներին:

Մի օր Երուսաղեմում հանդիպում է մի մարդու, որը կույր էր և անդամալուծ: Վերջինս լինելով հավատացյալ պատմում է Հիսուսի ամբողջ կյանքը, առանց ճանաչելու Քրիստոսին:

Այս երկար խոսակցությունը ավարտվում է նրանով, որ անդամալուծը առողջանում է, աչքերը բացվում, որից հետո նոր իմանում է, որ խոսակիցը նույն ինքը Քրիստոսն է, որն արդեն աներևութացել էր, ափսոսում որ տիրոջ չի տեսել, սակայն արդեն ուշ էր:

Սույն պատմվածքը գուցե մի նոր անվավեր է և արժանի ուշադրության:

21. Էջ ՄԽԲ. ռիջույն քեզ իզերինէ պատմութիւն:

(ողջույն քեզի վերաբերալ պատմություն)

Ժամանակին մի հարուստ մարդ կար, որի հարստության աղբյուրը իր մարդկանց միջոցով ճանապարհորդներին կողոպտելն էր:

Մի անգամ մի ճանապարհորդ են բռնում: Երբ կողոպտում և ուզում են սպանել, զոհը խնդրում է իրեն տանել ավազակների մեծի մոտ և ապա սպանել: Ծանապարհորդը, որը քահանա էր, ավազակապետի Տերփան անունով պահակի սիրույն, որը հավատացյալ էր և ամեն օր «ողջույն քեզ Մարիամ լի շնորհոք»-ն էր ասում, թողություն է շնորհում այդ հարուստ ավազակապետին, որը ընկնելով քահանայի ոտքերին դարձի է գալիս:

22. Էջ ՄԽԷ. երեք մանուկնքլարըն ճաքը օլունոր:

(երեք մանուկների պատմությունն է լինում)

Հովակիմ թագավորի ժամանակներում երեք մանուկներ կային, որոնց անուններն էին՝ Անանիա, Ազարիա և Միսայել, որոնց Դանիել մարգարեի

հետ ուղարկվեցին Պաղտատ նաքոթոթոնոսոթ թագավորի մոտ: Վերջինս նրանց սիրով է ընդունում և վարպետ-արհեստավորների միջոցով նրանց արհեստներ է սովորեցնում:

Այնտեղ երեխաների անունները փոխում և համապատասխանաբար անվանում Սեդրակ, Միսակ և Յաքետնաքով: Դանիելը այս երեխաների հորեղբայրն էր:

Այնուհետև պատմվում է, թագավորի կողմից ոսկե արձանի կանգնեցնումը և երեք մանուկների արձանին պաշտելուց հրաժարվելը, թագավորի կարգադրությամբ կրակի մեջ գցվելը և մանուկների այնտեղից ողջ դուրս գալը, որից հետո թագավորի էլ քրիստոնյա դառնալը:

Նաքոթոթոնոսոթի մահվանից հետո չորս թագավորներ հաջորդաբար թագավորում են, չորրորդը կոապաշտ էր, որի կարգադրությամբ էլ դանիելը չորսին գլխատում է: Մի հրեա նրանց մարմինները տանելով իր տունը սընդուկի մեջ պահեց այնքան, մինչև քրիստոնեությունը ազատ պաշտվեց, որից հետո նրանց դիակները եկեղեցիի մեջ թաղեցին, ուր շարունակվեցին այն հրաշագործությունները, որոնք լինում էին նաև մինչև այդ:

Սա Դանիելի հայտնի գրքի վերապատումն է, որը ունի նաև ակնհայտ խոտորում: Այն պետք է հաշվի առնել, որպես մարգարեության մի այլ պարականոն տարբերակ:

23. Էջ ՄԾԵ. Թատաստան իզերինէ նաքիլ օլունուր:

(դատաստանի վերաբերյալ պատմությունն է լինում)

Պատմվում է Ադամի և Եվայի կողմից արգելված պտուղը ուտելուց հետո դրախտից արտաքսվելը: Այնուհետև մարդկանց մեղքերից ազատելու համար Հիսուսի աշխարհ գալը, թվարկվում է արած հրաշագործությունները, Ղազարոսին հարություն տալը, չարչարանքը, խաչելությունը, թաղումը, հարությունը և եզրակացնում է, որ այս բոլորը մեր տերը մեզ համար սրեց: Այնուհետև խոսվում է այն մասին, որ մենք այս աշխարհում հյուրեր ենք և մեր կյանքը իզուր չանցկացնենք, այլ այնպես ապրենք, որ հանդերձյալ աշխարհում արքայության արժանանանք արդարանալով վերջին դատաստանի առաջ, որին միշտ պետք է պատրաստ լինենք:

Այս աշխարհում, նաև հրաժարվենք մեր անցողական ունեցվածքից:

24. Էջ ՄԿԷ. գենկին քիմսէնին նաքլը օլունուր:

(ոմն հարուստի պատմությունն է լինում)

Ժամանակին մի մեծահարուստ մարդ կար, որը շատ ազահ էր, և որպեսզի իր ունեցվածքը բազմապատկի իր միակ որդուն որոշ քանակությամբ դրամ տալով ուղարկեց Էվրոբա կոչված երկիրը պանդխտության: Որդին այնտեղ հանդիպում է մի մեծ գիտունի, որից սովորում է Աստվածաշնչի և Ավետարանի պարունակությունը և գալիս է Աստուծո ճանապարհին, որից հետո իր ունեցած հարյուր ահնեն բաժանում կարիքավորներին և վերադառնում իր հայրենիքը: Հայրը իմանալով որդու վարմունքը, նախ ծեծում, ապա դատի է տալիս, ուր որոշում են կախել որդուն հորը հրամանին դեմ գալու մեղադրանքով:

Հրաշքով որդին փրկվում է կախադանից, իսկ հրեշտակը նրան տանում է մի այլ քաղաք, ուր որդեգրվում է մի հարուստի կողմից:

Այնտեղ իր բարքի վարքի պատճառով դառնում թագավորի փեսան, ի վերջո թագավոր և կարգադրում է բոլոր աղքատներին կերակրել:

Մի օր աղքատ վիճակում իր հայրն է գալիս, որին ևս կերակրելով, իր աներոջ պալատն էլ նրան է նվիրում: Երբ հայրը որդուն ճանաչում է, ներո-

ղություն է խնդրում, իսկ որդին հորը մեծ պատիվների արժանացնում ասելով, ահա այն հարստությունը, որը ինձանից ակնկալում էիր:

25. Էջ ՄԶԱ. մուհապեթ իզերինէ պատմություն:

(համերաշխության (սիրո) վերաբերյալ պատմություն)

Պատմվում է երկու քրիստոնյա ընկերների անխաղախ սիրո մասին, որի պատճառով էլ երկուսն էլ փրկվում են կախաղանից, որովհետև իրար չեն դավաճանում:

26. Էջ ՄԶԶ. ածածինին պատմություն:

Պանդխտության մեկնող հավատացյալը իր հղի կնոջից ծնվելիք որդուն հանձնում է Աստվածածնի հովանավորության: Վերադարձին տեսնում է, որ կինը տղայաբերքի ժամանակ մահացել է, երեխան նույնպես և թաղել են: Աստվածածինը լսում է հուսահատված մարդու աղոթքները և կատարվում հրաշք. գերեզմանից հանում են երեխային ողջ, իսկ մորը, ոչ, որի համար Աստվածածինը ասում է. դու երեխային հանձնեցիր ինձ, իսկ մորը ոչ:

27. Էջ ՄԶԹ. կիրակի իզերինէ պատմություն: (կիրակիի վերաբերյալ պատմություն)

Մի դերձակ որոշում է գնալ Երուսաղեմ և իր կիրակնօրյա աշխատանքով մի ծանրագին զգեստ կարելով տանում հետը և այն նվիրում պատարագիչ եպիսկոպոսին: Սակայն «սուրբ սուրբ»-ի ժամանակ պատարագիչ եպիսկոպոսի վրայից զգեստը այրվում և ոչնչանում է, որով Աստված չի ընդունում կիրակի օրվա աշխատանքի արդյունք հանդիսացող նվերը:

28. Էջ ՄՂԲ. մեծատուն կանայքըն նաքլը: (մեծատուն կանանց (կնոջ) պատմությունը)

Մի հարուստ կին, որի որդին քահանա էր և ինքը ամուսին չունենալով ապօրինի հղիանում և ունեցած զույգ երեխաները խեղդում խայտառակվելուց խուսափելու համար:

Այս մեղքը իրեն տանջում է և չնայած իր ամբողջ ունեցվածքը բաժանում է աղքատներին, մեղքի թողություն չի ստանում դառնալով դժոխքի բաժին, որովհետև գործած մեղքը չէր խոստովանել քահանային, որով խորհուրդ է տրվում մեղքերի խոստովանություն:

29. Էջ ՄՂԸ. մեծատունուն նաքլը: (մեծահարուստի պատմությունը)

Մեղքերի մեջ թաղված մեծահարուստը, երբ Գաբրիել հրեշտակը գալիս է հոգին առնելու, նրան երեք անգամ խաբում և չորս տարի երեք օր ողջ է մնում, սակայն ի վերջո դժողքի բաժին է դառնում:

30. Էջ ՅԴ. մեծատուն քիմսէինն նաքլը: (ոմն մեծահարուստի պատմությունը)

Պաղտատի շահի լուծայափոխ հանդիսացող Գևորգ ամիրան մի որդի ուներ, անունը Կարապետ, որը վարժապետի մոտ շատ գիտություններ ձեռք բերեց, սակայն նա դժգոհ էր և ցանկանում էր արհեստ սովորել: Հայրը 40 գասկ ահնա է տալիս և քառասուն վաճառականների ըկերակցությամբ ուղարկում Ըստամպոլ, ուր առանձին իջևանում է մի խանի մեջ: Այդ քառասուն գասկը բաժանում է աղքատներին, մնում մորը տված տասը գասկը, որը ևս ծախսելուց հետո մնում է սոված: Ի վերջո վաճառական ընկերները գտնում են Կարապետին, իրենց հետ տանում Պաղտատ և հանձնում հորը: Հայրը խիստ սնքավարար որդու ձեռնունայն վերադարձից դատի է տալիս որդուն, ուր որոշվում է կախել հորը շատղ որդուն: Սակայն Կարապետին հաջողվում է փախչել Ըստամպոլ, ուր հանդիպում է նրանց, որոնց իր փո-

դերն էր տվել: Նրանց փոխադարձ օգնության շնորհիվ դառնում է խանութ-
պան:

Աստիճանաբար հարստանում և կառուցում մի աղքատանոց, ուր ձրի
կերակրում է աղքատներին: Մի օր էլ աղքատացած հայրը և մայրը գալիս
են, որոնց ճանաչելուց հետո լավ ընդունում և ասում է, որ այս ամբողջ ու-
նեցած հարստությունն ան ձերն է, որով և վերջանում և պատմությունը:

31. Էջ 3ԼԲ. Չափածո մի ընդարձակ ստեղծագործություն է, որը ունի
ՄՅԴ (184) քառյակ և ընդհատվում ձեռագրի վերջին էջերի բացակայու-
թյան պատճառով, ուստի չգիտենք թե ընդամենը քանի քառյակ է ունեցել¹⁶:
Այդ ստեղծագործությունը բաժանված է առանձին գլուխների: Առաջինի
վերնագիրն է՝ յղճելի մարիամը¹⁷ պատմություն (խղճալի Մարիամի
պատմությունը):

Էջ 3Խ. ԼԸ (38) քառյակից սկսվողը ունի հետևյալ վերնագիրը. իքին-
ճի պաշտա պիր աբրահան [մ] հիւնքեար օղլու ավա չըբըպ խղճալի մա-
րիամը պուլմար:

Թարգմ. երկրորդ գլխում մի Աբրահամ թագավորի որդին որսի դուռս
գալը, խղճալի Մարիամին գտնելը:

Էջ 3ԽԳ. ԾԲ քառյակից սկսվողի վերնագիրն է՝ իւշիւնճի պաշտա կը-
րապաշտ փատիշահտան էլշի կէլմէսինին անքը օլունոր:

Թարգմ. երրորդ գլխում կռապաշտ թագավորից դեսպանի գալու պատ-
մությունն է լինում:

Էջ 3ԽԵ. Կ (60) քառյակից՝ տեօրտինճի պաշտա խղճելի մարիեա-
մըն էրքէք էվլատ տօղորմար վէ յովսէբէ միւնիտէ քեահատը եօլլամար-
նըն անքը օլունոր:

Թարգմ. Չորրորդ գլխում խղճալի Մարիամի արու գավակ ծնելու և
Հովսէփին ավետիսի թուղթ ուղարկվելու պատմությունն է լինում:

Էջ 3ԽԸ. ՀԳ (73) քառյակից՝ պեշինճի պաշտա յովսէբ քեահատը օ-
քուտու վէ քենտի քեահաթ եագըպ անասընա վէ պապասընա եօլլամար-
նըն անքի օլունոր:

Թարգմ. Հինգերորդ գլխում Հովսէփը թուղթը կարդաց և ինքը թուղթ
գրելով հորը և մորը ուղարկելու պատմությունն է լինում:

Էջ 3ԽԹ. Յ (80) քառյակից՝ ալթընըն պաշտա միւնիտէյի պապասընա
քեահատը կէթիրիպ մարմիամը սարայտան տըշարը էրտիքլէրինին անքը
օլունոր:

Թարգմ. վեցերորդ գլխում ավետիսի թուղթը հորը բերելով Մարիամին
կալատից դուրս անելու պատմությունն է լինում:

Էջ 3Ծ. ՅԴ (84) քառյակից՝ Ետինճի պաշտա խղճելի մարիամըն
տէրտլի ֆեղան էթմէսի մաքսումի կէօքսիւնտէ եօլմէսինին անքը օլունոր:

Թարգմ. Յոթերորդ գլխում խղճալի Մարիամի վշտալի ողբալը [և] ան-
մեղը կրծքին մահանալն է պատմվում:

Էջ 3ԾԵ. ՃԵ (105) քառյակից՝ սեքիզինճի պաշտա սբ ածածինին կեօ-
րիւնմէսի կօլլարընըն վէ չօճուկունուն սաղալմասընըն անքի օլունոր:

¹⁶ Քանի որ այն բանաստեղծություն է, ձեռնագրի ենք մնում նրա բովանդակությունը
տալոց, թողնելով նյութ մի այնպիսի հետազոտման համար, ուր կարող են ի մի բերել և
գրել նրա տաղաչափական հանգերի և այլ տեխանկյուններով մատեցվող ուսումնասիրու-
թյուն, ուր ընդգրկվի նաև ձեռագրում գտնվող մյուս բանաստեղծությունները:

¹⁷ Այստեղ հավանական է տառախալի աղկալությունը, որով պետք է լինի Մարիամ,
քանի որ բանաստեղծությունում հիշվող «խղճելին» միշտ Մարիամն է:

Թարգմ. ութերորդ գլխում սուրբ Աստվածածնի երևալը թևերի և երեսի առողջանալու պատմությունն է լինում:

Էջ 34. ԾԼԲ (132) քառյակից՝ տօթուզուննու պաշտա մարիամ ածածինն խըղճելի մարիամէ սեղան կէթիրմէսիննն նաքլի օլունուր:

Թարգմ. Իններորդ գլխում Մարիամ Աստվածածնի խղճալի Մարիամին սեղան տանելու պատմությունն է լինում:

Էջ 34Ա. ԾԼԶ (136) քառյակից՝ օնուննու պաշտա ածածինն յովսէփէ կեօրինմէսի հաթըրընը սօրմասը վէ ճենք թալիմ էօյրէթմէսի նաքլի օլունուր:

Թարգմ. տասներորդ գլխում Հովսէփին Աստվածածինը երևալը, որպիսությունը հարցնելը, պաշար և վարժություն սովորեցնելու պատմությունն է լինում:

Էջ 34Զ. ԾԾԹ (159) քառյակից՝ օնպիրիննի պաշտա յովսէփ կիտիալ էհլինի արալըպ պուլմասընընն նաքլի օլունուր:

Թարգմ. տասնմեկերորդ գլխում Հովսէփը գնալով [իր] ժողովրդի (հարազատի) փնտրելով գտնելու պատմությունն է լինում:

Կիսատ մնացած չափածո ստեղծագործության վերջին տողերն են՝

տաշլար տաշլար լաթիֆ տօնանտըլար.

երիլէն կեօյ վէ եիրեկիմ շազօլտուլար.

Թարգմ. Սարեր քարեր նուրբ (քաղցր) շրջապատեցին

Երկիր երկինքը և սիրտս առանձնացան:

Այստեղ ընդհատվում է ձեռագիրը հասնելով մինչև 34Ա (371) էջը, որի թարգմանական բովանդակությունը ամենաանդամ կերպով փորձեցինք տեղավորել մի հոդվածի սահմաններում:

Գոհունակությամբ կարող ենք նշել, որ մոռացության վիհից փրկվեց մի ձեռագիր և ի հայտ եկավ մի նոր գրիչ Յովհաննէս Ստեփանի որդի Մալեգ[եան], որը լինելով իր ժամանակի և շրջապատի հարազատ ծնունդը, բարեպաշտ ոգով, տարիներ տևած տքնաջան աշխատանքով կազմել է սույն ժողովածուն, ուր տեղադրվել են բացառապես քրիստոնեական՝ բարոյախոսական խրատական, վարքաբանական արձակ և չափածո ստեղծագործություններ, հագեցված հրաշապատումներով:

Այսպիսով Կուտինյան տվեց մի ձեռագիր ևս: Հիշված 23-ին ավելացավ նաև 24-րդը, որը կարծում ենք, որ այդ գրչության օջախի կարապի երգն է, թեև մեսրոպատառ, սակայն խոստում ձայնով և խաթարված ուղղագրությամբ:

Կուտինյահայ գրչությունը ևս ունեցավ իր անմահ զավակի զուգահեռ եղեռնական վախճանը:

Իեռևս 30-ական թվականների սկզբներին, երգահան Գ. Կառվարենցը, իր կողմից գրի առնված և ձայնագրված Կոմիտաս վարդապետին նվիրված բանաստեղծությունում պատկերավոր կերպով ասում է.

Ով ձայներուն Զայնը մեռած պղտոր Գետ,

Ֆամատող շունչն Անմահներու,—վարդապետ

Վերադարձիր, ըլլայ Երգի մը համար...¹⁸:

Մենք էլ նույնպես սրտի կսկծալի մորմոքով անհույս ձայնակցում ենք, դիմելով վարդապետի հայրենակիցներին.

Վերադարձեք ըլլայ Զեռագրի մը համար...:

¹⁸ Տես՝ Հայ Քնար, ընդարձակ երգարան, հրատ. «Հորիզոն»-ի, Սելանիկ, 1985, էջ 567: